<<Կրթության բարելավում>> վարկային ծրագրի շրջանակներում հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման նպատակով խորհրդատուների ընտրության մրցույթի 2016թ. դեկտեմբերի 16-ին տրված հայտարարության ժամկետի երկարացում

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ը, <<Կրթության բարելավում>> ծրագրի շրջանակներում հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման նպատակով հայտարարում է խորհրդատուների ընտրության մրցույթ: Ընտրված խորհրդատուները կընդգրկվեն աշխատանքային խմբերում՝ ըստ հետևյալ ուսումնական բնագավառների.

- մաթեմատիկա, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ) և համակարգչային գիտություններ
- հայոց լեզու և գրականություն
- ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն

Տվյալ խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- ուսումնասիրել հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտության արդյունքները,
- ուսումնասիրել վերանայված կրթակարգը և պետական չափորոշիչը,
- վերանայել և լրամշակել համապատասխան առարկայական չափորոշիչները և ծրագրերը
- մասնակցել վերանայված առարկայական չափորոշիչների և ծրագրերի նախագծերի հանրային քննարկումներին, վերլուծել քննարկումների արդյունքները,
- պատրաստել առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերջնական տարբերակը:

Դիմող թեկնածուները պետք է բավարարեն փորձի և որակավորման հետևյալ պայմաններին.

- Թեկնածուի ընդհանուր որակավորումը.
  - բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում
  - գիտամանկավարժական հետազոտությունների իրականացման փորձ

- Թեկնածուի ընդհանուր աշխատանքային փորձը
  - առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
  - դասավանդման փորձը դպրոցում ցանկալի է
- Թեկնածուի աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում
  - մասնակցել է նմանատիպ ծրագրերի
  - կրթական չափորոշիչների, ծրագրերի և/կամ թեստերի մշակման ուղղությամբ նախկին փորձությունը կդիտվի որպես առավելություն

Թեկնածուների գնահատումը կիրականացվի հետևյալ կերպ.

- ընդհանուր որակավորումը– 30 միավոր
- ընդհանուր աշխատանքային փորձը - 30 միավոր
- աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում- 40 միավոր

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը, աշխատանքների ցանկը:

- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, կամ էլ. փոստով (cfep@arminco.com) մինչև հունվարի 30, 2017թ., ժամը 17:00-ն, (դիմումի ձևը տեղադրված է cfep.am կայքում):
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 57-56-90 (45) հեռախոսահամարով: